ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ, հեռ. 560 360
www.foi.am, foi@foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA, Tel: 560 360

194-ի 6
28.02.2013թ.

ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության
պետ պարոն Արմեն Գեւորգյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Գեւորգյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2013թ.-ի փետրվարի 11-ին տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել էր Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը՝ խնդրելով տրամադրել ՀՀ-ում գրանցված բոլոր հասարակական կազմակերպությունների ցանկը եւ դրանց կոնտակտային տվյալները:

Պատասխան գրությամբ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը հայտնել է, որ հասարակական կազմակերպությունների կոնտակտային տվյալները կարող են տրամադրվել միայն օրենքով սահմանված կարգով եւ չափով պետական տուրք վճարելու դեպքում: Սակայն, գրության մեջ պետական տուրքի վճարման եւ չափի մասին այլ տեղեկություններ նշված չեն:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ չափով պետական տուրք պետք է վճարել 1 հասարակական կազմակերպության կոնտակտային տվյալները ստանալու համար,
2. Գրանցված ՀԿ-ներից քանիսի՞ կոնտակտային տվյալներն են առկա Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում եւ ընդհանուր ի՞նչ չափի պետական տուրք պետք է վճարել ՀԿ-ների՝ գործակալության տնօրինության տակ գտնվող կոնտակտային տվյալները ստանալու համար,
3. Ո՞ր հաշվեհամարին պետք է վճարել պետական տուրքը:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան